

10 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ աշխարհամակարգ է խոտհարքը.

1. բնական 2. բնահասարակական 3. հասարակական 4. տնտեսական

2. Բնական աշխարհագրության համալիրային ճյուղերից է.

1. տարածաշրջանային աշխարհագրությունը 2. ռեկրեացիոն աշխարհագրությունը
3. հնէաշխարհագրությունը 4. երկրաբնապահպանությունը

3. ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

1. բազմաճյուղ է, 2. ունի էքստենսիվ բնույթ,
3. հողային ֆոնդը մոտ 3 մլն հա է, 4. առաջատար ճյուղն անասնապահությունն է:

4. Արաքսի վտակներից չէ.

1. Մակուն 2. Արփան 3. Աղստև 4. Ողջին

5. Ընտրել պետությունների ճիշտ շարքն՝ ըստ տարածքի մակերեսի նվազման հաջորդականության.

1. Կանադա, Չինաստան, Ավստրալիա, Հնդկաստան
2. Բրազիլիա, Թուրքիա, Իրան, Ֆրանսիա
3. Ռուսաստան, Չինաստան, Արգենտինա, ԱՄՆ
4. Ուկրաինա, Ինդոնեզիա, Ճապոնիա, Ղազախստան

6. <<Պետություն – պետական կառավարման ձև>> գույգերից ընտրել ճիշտը.

1. Ճապոնիա – բացարձակ միապետություն
2. Գերմանիա – նախագահական հանրապետություն
3. ԱՄՆ – խորհրդարանական հանրապետություն
4. Նիդերլանդներ – սահմանադրական միապետություն

7. Տայգայի գոնային բնորոշ են.

1. շագանակագույն հողերը 2. սևահողերը 3. պողոզլային հողերը 4. ճմապողզոլային հողերը

8. Արտադրանքի ծավալով համաշխարհային արդյունաբերության առաջատար ճյուղն է.

1. էներգետիկան 2. մետաղաձուլությունը
3. թեթև արդյունաբերությունը 4. մեքենաշինությունը

9. <<Մշակաբույս – առաջատար երկիր>> գույգերից ընտրել սխալը.

1. սուրճ – Եթովպիա 2. եգիպտացորեն – ԱՄՆ
3. վուշ – Ռուսաստան 4. կաուչուկատու հնեա – Մալայզիա

10. Կլիման կախված չէ.

1. վայրի աշխարհագրական լայնությունից 2. տիրապետող քամիներից
3. վայրի բարձրությունից 4. Երկրի ներքին ջերմությունից

11. Արցախի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

1. Մեկ շնչին բաժին ընկնող վարելահողերի մակերեսը մի քանի անգամ գերազանցում է ՀՀ համապատասխան ցուցանիշը:
2. Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են հացահատիկի մշակությունը և այգեգործությունը:
3. Բազմամյա տնկարկները զբաղեցնում են շուրջ 46 հազ. հա տարածք:
4. Կլիմայական պայմանների պատճառով խաղողագործությունը Արցախում ավելի աշխատատար է և քիչ շահութաբեր, քան ՀՀ-ում:

12. Ո՞ր դեպքում է ջերմաստիճանի տատանման լայնությունը մեծ.

- | | |
|---------------------------------------|----------------------------|
| 1. գարնանը և աշնանը՝ պարզ եղանակներին | 2. անտառածածկ շրջաններում, |
| 3. ձմռանը՝ ամպամած օրերին | 4. ծովերի վրա |

13. Աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշներից չէ.

- | | |
|-------------------------------------|---|
| 1. երևույթների ռիթմիկությունը | 2. ցամաքի և ջրի տեղաբաշխումը |
| 3. նյութերի և էներգիայի շրջապտույտը | 4. գոտիականությունը և զոնայականությունը |

14. Ռաջիոնալ բնօգտագործման օրինակ է.

1. անտառանյութի փոխադրումը խոշոր գետերով,
2. անտառների հատման միջոցով արոտավայրերի ընդարձակումը,
3. օգտակար հանածոների նոր հանքավայրերի շահագործումը,
4. հումքի երկրորդային շահագործումը:

15. Մթնոլորտի աղտոտման մարդածին աղբյուրներն են.

- | | |
|------------------------|------------------------|
| 1. ապարների քայքայումը | 2. արդյունաբերությունը |
| 3. հրաբխի ժայթքումը | 4. փոշեմրրիկները |

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Երկու քաղաքներ գտնվում են հասարակածի վրա: Նրանցից մեկը գտնվում է արևմտյան երկայնության 100° – ի, իսկ մյուսը՝ արևելյան երկայնության 120° – ի վրա: Որոշել նրանց միջև ամենակարճ հեռավորությունը աստիճանով:

17. Որքան է երկրի ուրբանիզացման մակարդակը (%), եթե նրա բնակչության թիվը 16 մլն է, իսկ գյուղական բնակչության թիվը՝ 4 մլն մարդ:

18. Քաղաքը գտնվում է արևելյան երկայնության 45° – ի վրա: Լոնդոնից այն քանի՞ ժամվա տարբերություն ունի:

19. Նավը գտնվում է հարավային լայնության $31^{\circ} 30'$ / և արևելյան երկայնության 60° – ի վրա: Որոշել նրա հեռավորությունը (կմ -ով) հարավային արևադարձից:

20. Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 120 000 կմ է, իսկ երկրի տարածքը՝ 30 000 կմ²: Որոշել տրանսպորտային ցանցի խտությունը:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Արսեն Գրիգորյան